ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 26956.4 մլն դրամ՝ պլանավորված 25400 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.1 տոկոսով կամ 1556.4 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 76.5 տոկոսով կամ 11684.7 մլն դրամով, որից 9503.2 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Հունիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3713.6 մլն դրամ՝ պլանավորված 3198 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 16.1 տոկոսով կամ 515.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 38 տոկոսով կամ 1022.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 103 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 35 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 39325.0 հազ. դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 31 ստուգում՝ 39041.3 հազ. դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 102 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 61-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 27-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 4-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և լուծարային, 3-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության և 3 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 4 վարչական գործ՝ 486.8 հազ. դրամ գումարով, ավարտվել՝ 9 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 42016.5 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 123 վարչական գործով սահմանվել է 1503.0 հազ դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսվա ընթացքում կարճվել է 1 քրեական գործ, որով պետությանը հասցված վնասը կազմել է 3693.3 հազ. դրամ, իսկ նախաքննության ընթացքում 2 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 1530.5 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6286 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5323:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 48 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 9 վարձու աշխատողի՝ 1.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 55 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Առաջիկա տարիներին հարկային ոլորտում համակարգված և իրատեսական բարեփոխումներ իրականացնելու նպատակով մշակվել և հանրային քննարկման է ներկայացվել «Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգը:

Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը հունիսի 25-ին հանդիպում է ունեցել «Առաջնորդության դպրոց» հիմնադրամի մի խումբ ներկայացուցիչների հետ և ներկայացրել վերջին տարիներին Արցախի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման նպատակով իրականացված հիմնական բարեփոխումների ուղղություններն ու ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված առաջիկա ծրագրերը: Հանդիպման ընթացքում նախարարը պատասխանել է նաև «Առաջնորդության դպրոցի» ներկայացուցիչների հարցերին:

Հաշվետու ամսում նախարարության երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2018 թվականի 2-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 680 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հարկային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով 52 դիմորդների հետ կազմակերպվել է հարցազրույց:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 196, ելքագրվել՝ 65 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 8 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային եղանակով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**